ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց»
ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Վահան Տերյանի ստեղծագործության առանձնահատկությունները
Կատարող՝ Գյուլվարդ Ոսկանյան

Առարկա՝ Գրականություն
Ուսումնական հաստատություն՝ Հրազդանի № 11 հիմնական դպրոց

ՀՐԱՉԴԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1 Ինչպես նպաստել խմբային աշխատանքի իրականացմանը աշակերտների մոտ գրականության դասաժամերին 7

Գլուխ 2 Տերյանի կապը արվեստի բնագավառների հետ 10

Երաժշտություն 10

Գլուխ 3 Պատկերավորման-արտահայտչական միջոցների կիրառությունը 12

Եզրակացություն 16

Օգտագործված գրականության ցանակ 17

Ներածություն

Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ», «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ» շարքերն ամբողջության մեջ դառնում են մի մեծ ձև, որ գոյանում է բազում վտակներից, հոսանքներից ու լիցքերից, հյուսվում է բազմաճյուղ մի երկ՝ հոգու շարժման, անվերջ առնչությունների մերձեցման ու օտարացման հավետ ընթացքի մասին:

1908 թվականին, երբ լույս տեսավ երիտասարդ Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» անդրանիկ ժողովածուն, սկսվեց արևելահայ պոեզիայի նոր շրջանը, օդը լցվեց Տերյանով, մթնոլորտը բոցավառվեց տերյանական տրամադրություններով: Տերյանի գրչի տակ բյուրեղյա մաքրության ու նրբության հասավ հայոց լեզուն, նա ստեղծեց քնարական անզուգական երգեր: Նա պոեզիայի աշխարհում կարողացավ գտնել իր ոճն ու ձայնը, իր նյութն ու աշխարհը:

Տերյանի երգերում երբեմն ծանր հիասթափություն է զգացվում, կյանքից հեռանալու տրամադրություններ են արտահայտվում, բայց բանաստեղծը միշտ ճիգ է անում՝ դուրս գալու անկումային տրամադրությունից, հասնելու լուսավոր ափեր: Տերյանի՝ իբրև մարդում և բանաստեղծի վիճակված էր ամենից ավելի ապրել ու երգել «ամենաանտանելի վիշտը»՝ մենակությունը: Սակայն դա նրա համար ոչ թե ցանկալի, այլ կենսական հանգամանքներով պարտադրված իրավիճակ է, որը և դառնում է հոգեգան տառապանքի, բայց նաև լուսավոր անուրջների և սպասումների հորդառատ աղբյուր: Տերյանի բանաստեղծական աշխարհում իր արտացոլումն է գտել բանաստեղծի մարդասիրությունը, որի շնորհիվ երգում է նաև սերը մարդու և կյանքի նկատմամբ:

Նա լսում է խորհրդավոր շարժումը, բեկվող բնության ամենանուրբ շրշյունները և հազարաձայն մեղմիկ երգերը, մարող աշնան պայծառ օրորները...

«Մթնշաղի անուջներ»-ի շատ բանաստեղծություններում գծագրվում է քնարական հերոսի նվիրական իղձերն ու երազները՝ կապված սիրո, երջանիկ հանդիպման, մի ուրիշ լիարժեք կյանքի հետ: Հաճախ այս շքեղ անուրջները ծավալվում են «նրբակերտ մթնշաղի»՝ լույի և մութի այն խորհրդավոր միախառնման ժամանակ, երբ «ամեն ինչ երազում է հոգու հետ», երբ թվում է, «որ ողջ կյանքդ է մի անսահման քաղցր նինջ»: Բազում հոգեկան փորձությունների միջով է անցնում քնարական հերոսը, որին կյանքը հաճախ թվում է «տխուր հովիտ հավիտյան լալու»: Եվ նա ստիպված է մերթ ապավինել մենակության ու մոռացության, երբ կարելի է չզգալ, «որ կա սեր և՛ ցնորք և՛ լաց», երբ իր գերեզմանի

շուրջը կփռվի լռություն, լռություն, լռություն անսահման: Տերյանի աշունը մերթ մեռնող բնության և անհետացող գեղեցկության տխուր մեղեդի է, որ խառնվում է լքված հոգուն, մերթ պայծառ ու խորհրդավոր մի տարերք՝ ոսկեգույն օրորներով, բռնկվող արևով, նրբին շարժումով: Տողերին խառնվում են ամենազգայուն հոգու թախիծն ու մաքուր շունչը, տարածվում է բնության և մարդում մտերիմ, միաձույլ, գերող մեղեդին.

Ոսկեհանդերձ եկար և միգասքող,
Տխուրաչյա աշուն, սիրած աշուն.
Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,
Մետաքսներով քնքշաշրշուն:

Նայվածքներով խորին, եկար ներո՛ղ,
Եկար կրկին գերող, խորհրդավո՛ր,
Եկար հուշիկ, անչար ավաղներով,
Օրորներով ամենօրոր...

Այդ ամենին խառնվում է պայծառ թախիծը, ոսկեխոս տխրությունը՝ ծնված բնության բեկման և աշնան արևի պահին: Եղիշե Չարենցին անվերջ հուզում էին այս պայծառ թախիծը, մեղմիկ սիրով ողողված այս տողերը: Ակսել Բակունցը այս չքնաղ տողերը բնաբան է բերել «Միրհավը» պատմվածքին:

Տերյանի պոեզիայի վրա չէր կարող ազդեցություն չունենալ Առաջին համաշխարհային պատերազմը, որի ամենակուլ երախն ընկավ Արևմտյան Հայաստանը: Տերյանն ստեղծեց հայրենական սիրո չքնաղ երգեր՝ արնաքամ ժողովրդի ծանր բախտի և վիրավոր երազների պատկերներ: «Նա բանաստեղծ էր, անսպառ հուզաշխարհի տեր, արյան միջով նրան էին անցել «տարօրինակ» նախնիների անհանգիստ խառնվածքը, գեղեցիկի զգացողությունը, խոսքի ուժը, հակումը դեպի անսովորը»,- գրում է Հրանտ Թամրազյանը:

Տերյանի ստեղծագործական ոճը ժամանակի ընթացքում կրել է բազմաթիվ փոփոխություններ, նա անդրադարձել է ժամանակակից մարդու հոգեբանությանը, նրա ներքին այրման բարդություններին ու նրբություններին: Եվ այս ամենը վարպետորեն ներկայացնելով, բանաստեղծական նոր ձևեր կիրառելով, պատկերավորման-արտահայտչական բազմազան միջոցներ օգտագործելով՝ իր բանաստեղծական աշխարհի դռներն է բացել ընթերցողի առաջ:

Հետազոտական այս աշխատանքի հիմնահարցերն են՝

- կայուն բանաստեղծության ո՞ր ձևերով է ստեղծագործել Տերյանը
- պատկերավորման- արտահայտչական ի՞նչ միջոցներ է կիրառել
- ինչպե՞ս է արտահայտվել Տերյանի բանաստեղծական աշխարհը արվեստի տարբեր ճյուղերում:

Հետազոտական աշխատանքի խաչվող հասկացությունները՝

- օրինաչափություն-սոնետ, տրիոլետ, գազել, հանգավորում
- կառուցվածք և գործառույթ -Վ. Տերյանի բանաստեղծությունների տաղաչափությունը
- անհատական և մշակութային արժեհամակարգ–գրողի օգտագործած բառապաշարը, խոսքի արտահայտչամիջոցների կիրառությունը, տրամադրությունը
- անհատներ և հարաբերություններ - բանաստեղծություններում արտահայտված հույզերը, զգացմունքները

Հետազոտական աշխատանքի կապը այլ առարկաների հետ՝

- հայոց լեզու-բառապաշար, խոսքի կաղապար, պատկերավորման միջոցներ
- հասարակագիտություն-հույզեր, հոգեկան վիճակներ՝ որպես գրականության նյութ
- արվեստ-պատկերներ, նկարազարդումներ, մեղեդիներ և այլն

Հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Տերյանն իր բանաստեղծությունների նրբությամբ, քնքշությամբ, երաժշտականությամբ բազմաթիվ կոմպոզիտորների, նկարիչների, քանդակագործների ուշադրությունն է գրավել: Արդյունքում ստեղծվել են բազմաթիվ երգեր, որոնք իրենց մեղեդայնությամբ ներկայացնում են բանաստեղծի հույզերի, ապրումների աշխարհը: Նկարիչների կողմից ստեղծված պատկերները զարդարում են նրա բանաստեղծական ժողովածուների շապիկները, նրա կյանքը, գործը պատկերող քանդակները տեղադրված են Հայաստանի տարբեր անկյուններում:

Այսօր էլ երիտասարդ երաժիշտները, արվեստի տարբեր գործիչներ անդրադառնում են Տերյանի արվեստին.ստեղծվում են նոր երգեր, փորձ է արվում նկարազարդել բանաստեղծությունները: Երևանի տարբեր անկյուններում, այգիներում տեղադրվում են նրա արձանները, դպրոցի բակում՝ կիսանդրին:

Անվանակոչվում են փողոց, դպրոց, մշակութային կենտրոն: Այս ամենն էլ գրավում է պատանի ընթերցողներին, ովքեր դրանց միջոցով փորձում են թափանցել Տերյանի աշխարհը: Չէ՞ որ միայն բանաստեղծություններն ընթերցելով կամ անգիր հանձնարարելով տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող ընթերցողին չես զարմացնի ու չես գրավի: Գուցե ծանոթ կամ անծանոթ երգերը, նկարները, քանդակները, Տերյանի մասին ստեղծված ֆիլմերը նրան մղեն որոնելու, գտնելու Տերյանին՝ որպես մարդու, բանաստեղծի, հասարակական-քաղաքական գործչի:

Գլուխ 1 Ինչպես նպաստել խմբային աշխատանքի իրականացմանը աշակետների մոտ գրականության դասաժամերին

Այն կատարում եմ՝ կիրառելով զրույցի մեթոդը:

Աշակերտներին հիշեցնում եմ, որ առօրյա խոսակցական լեզվում մենք ուշադրություն չենք դարձնում բառերի հնչյունական կազմին, բայց բանաստեղծության մեջ պոետը չի կարող անտարբեր լինել այդ խնդրի նկատմամբ:

Բանաստեղծական խոսքի գեղագիտական նշանակությունը ենթադրում է նաև բարեհնչյություն, սահունություն: Հնչյունը իմաստ է Ձեռք բերում միայն բառային կոնտեքստում՝ այլ հնչյունների հետ զուգակցվելով: Առանձին վերցրած հնչյունների հետ որոշ տրամադրություն, հույզ կապել չի կարելի: Սակայն բանաստեղծության մեջ երբեմն այդպիսի կապ ստեղծվում է:

Գեղարվեստական խոսքի մեջ միևնույն կամ նման բաղաձայն հնչյունների կուտակումը կոչվում է բաղաձայնույթ (ալիտերացիա), իսկ միևնույն ձայնավորի կրկնությունը՝ առձայնույթ (աշոնանս): Խոսքից հետո աշակերտներին հիշեցնում եմ, որ այս երևույթին մենք ծանոթ ենք դեռևս Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների ուսումնասիրման ժամանակ: Այնուհետև աշակերտներին բաժանում եմ խմբերի: Առաջին խմբին հանձնարարում եմ Գրիգոր Նարեկացու տաղերից բերել բաղաձայնույթի օրինակներ, երկրորդ խմբին՝ Վ. Տերյանի ստեղծագործություններում գտնել բաղաձայնույթի օրինակների, երրորդ խմբին Եղիշե Չարենցի ստեղծագործություններում և կազմում ենք վենի դիագրամ: Իսկ չորրորդ խմբին հանձնարարում եմ բերել առձայնույթի օրինակներ:

Առաջին խումբը ասում է, որ Գրիգոր Նարեկացու «Մեղեդի Ծննդյան» տաղում կիրառվել է «ծ» հնչյունի բաղաձայնույթ, նաև «վ» և «շ» հնչյունների բաղաձայնույթ «վարդավառին» տաղում:

Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,
Ինչպես երկու փայլակնաձեւ արեգակներ.
...
Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
ծավալէր ծաղիկ ծովային:

Բերում են օրինակ Հ. Թումանյանի «Ախթամար» բալլադի առաջին տողը.

Ծըփում ծովն ալեծածան,
Ծըփում է սիրտը տըղի.
Գոռում է ծովն ահեղաձայն,
Նա կըռվում է կատաղի...

«Ծ» և «ձ» հնչյունների կրկնությունը օգնում է մեզ «լսելու» լճի ալիքների ծփանքն ու շառաչը.

* * *

...Ծուշանն շողէր հովտին,
շողշողէր դէմ արեգականն...
...Ծուշանն շաղով լցեալ,
շող-շաղով և շար մարգարտով:

Երկրորդ խումբը բաղաձայնույթի օրինակ է բերում Վ. Տերյանի «Ծշուկ և շրշյուն» բանաստեղծությունից:

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
— Բարդիներն են բաց պատուհանիս տակ,—
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:
«Ծշուկ ու շրշյուն»

Վ. Տերյանի «Ծշուկ ու շրշյուն» բանաստեղծությունից երեխաները նշել են «զ, ս, շ և ջ» բաղաձայն հնչյունները, որոնց կրկնության շնորհիվ մենք կարծես լսում ենք աշնանային քամու նվագը, ծառերից թափվող տերևների մեղմ շրշյունը:

Երրորդ խումբը բաղաձայնույթի օրինակներ է բերում Եղիշե Չարենցի «Մայրամուտի երգ» բանաստեղծությունից:

Մառ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում,-
Մեռնում է մութը մթնշաղում,-
Մառ մորմոքում է մայրամուտը: -

Մտորումներոս մահ են, մութ են,
Մարխե մտքեր են միայն մխում,-
Եվ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մրուր է մովից մաղում…
Ե.Չարենց

Իսկ Չարենցի «Մայրամուտի երգ» բանաստեղծության «մ» տառերի կուտակումը ծնունդ է տալիս մայրամուտի և մահվան պատկերներին:

Չորրորդ խմբին հանձնարարվում է Վ. Տերյանի ստեղծագործություններից դուրս գրել առձայնույթի օրինակներ: Նրանք ասում են. որ «Ծշուկ և շրշյուն» բանաստեղծության մեջ առձայնույթը զուգակցվում է բաղաձայնույթի հետ, նկատվում է «ու» ձայնավորի կուտակում, որ միանալով բաղաձայնույթին, ստեղծում է երաժշտական տրամադրություն, կազմում են վենի դիագրամ:

Առձայնույթի օրինակներն են բերում նաև Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքից:

— Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
Վո՛ւշ քու սերին, քու յարին…
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին…

«Ու» ձայնավորի կուտակումը հերոսների ճակատագիրը սգացող ձայնի տպավորություն է առաջացնում:

Վ. Տերյանի հետևյալ տողերի հնչյունական կրկնությունները՝ ռիթմի, հանգի և տան կառուցվածքի հետ միասին հանդես են գալիս բանաստեղծական ձևի տարրեր և ծառայում են բովանդակության արտահայտմանը:

Վարդավառի վարդերը վառ
Երգող երգչիդ երդվում եմ ես…

Գլուխ 2 Տերյանի կապը արվեստի բնագավառների հետ

▒▒_▒▒▒▒▒_▒▒▒▒▒▒ ▒ ▒▒▒▒.mp3

Երաժշտություն

Վահան Տերյանը հայ պոեզիայի անդաստան մուտք գործեց իր նուրբ, քնքուշ ու մեղմ ստեղծագործությունների ուրույն աշխարհով: Նրա բանաստեղծություններն այնքա՞ն երգեցիկ ու երաժշտական են: Պատահական չէ, որ կոմպոզիտորներն իրեն ստեղծագործությունների համար նյութ են ընտրում այն գործերը, որոնք իրենց կառուցվածքով, բնույթով, հնչեղությամբ նպաստավոր են երգ դառնալու համար: Այս իմաստով հայ գրականության մեջ դժվար թե որևէ մեկի գործերը համեմատվեն Տերյանի չափազանց քնարական, երաժշտական բանաստեղծությունների հետ: Սա է պատճառը, որ Տերյանը անմիջապես գրավեց կոմպոզիտորների ուշադրությունը: Տերյանի պոեզիան իր քնարականությամբ ու երաժշտականությամբ ոգեշնչել է շատ կոմպոզիտորների, որոնք նրա խոսքերի հիման վրա գրել են տասնյակ երգեր, խմբերգեր, ռոմանսներ, սիմֆոնիկ ստեղծագործություններ:

«Հայ երաժշտական ոգին, հայոց երաժշտությունը՝ խոսքի մեջ, թերևս, ամենազգայուն ու նուրբ ձևով Տերյանի պոեզիայի մեջ է: Ուրիշ պոետներ հասնում են դրան, եթե պետք է լինում, կամ եթե կարողանում են, կամ եթե նյութն է պահանջողը: Բայց Տերյանը մշտապես է այնտեղ»[9],- այսպես է արտահայտվել Տերյանի մասին մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը: Իր հարցազրույցներից մեկում նա այն միտքն է արտահայտել, որ միշտ վախեցել է Տերյան երգելուց, որովհետև Տերյանն ինքը երաժշտություն է: Կոմպոզիտորը նշում է, որ իր համար ավելի հեշտ է եղել երաժշտություն գրել դրամատիկ շեշտերով բանաստեղծությունների վրա, ոչ թե նրանց, որոնց մեջ բնությունն է, բանաստեղծի սիրած գույներն են: Մանսուրյանը Տերյանի բանաստեղծությունների հիման վրա վեց երգ է գրել՝ «Որպես Լաերտի որդին», «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Քեզ կմնա միշտ օտար Նաիրական իմ հոգին», «Աշնան երգ» («Ցրտահար, հողմավար») և այլն: Այդ երգերից չորսը բանաստեղծի «Երկիր Նաիրի» շարքից են, մյուս երկուսը՝ «Մթնշաղի անուրջներ» ժողովածուից: Պետք է նշել նաև, որ առաջին և երկրորդ շարքի երգերը ստեղծվել են 20 տարվա տարբերությամբ:

Վ. Տերյանի բանաստեղծությունների հիման վրա երգեր են գրել ինչպես հայտնի շատ կոմպոզիտորներ, այնպես էլ երաժշտական ասպարեզում իրենց առաջին քայլն անող բազմաթիվ երաժիշտներ: Տերյանի պոեզիային անդրադարձել

են այնպիսի մեծանուն երաժիշտներ, ինչպիսիք են Վաչե Հովսեփյանը՝ «Էստոնական երգ»[10], Ալեքսեյ Հեքիմյանը՝ «Կարուսել»[11], Նիկոլ Գալանտերյանը՝ «Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր…»[12], Ռոմանոս Մելիքյանը՝ «Երգ» («Կուրծքը հև առած»)[13], Լևոն Աբրահամյանը՝ «Իմ խաղաղ երեկոն է հիմա»[14] և այլն:

Տերյանի ստեղծագործությունները ներշնչանքի անսպառ աղբյուր են նաև երիտասարդների համար: Դա է պատճառը, որ մեր օրերում նաև նրա բանաստեղծությունների հիման վրա երգեր են գրում այնպիսի անհատներ, որոնց անունները գրեթե ոչինչ չեն ասում ընթերցողին: Դա վկայում է այն մասին, որ Տերյանի պոեզիան չի կորցրել իր թարմությունը, արդիականությունը, գեղեցկությունը: Եվ երիտասարդ ստեղծագործողները Տերյանի շնորհիվ ուզում են նոր երանգ ավելացնել իրենց գունապնակում: Դրանով են նաև գրավում այսօրվա ունկնդրին, որը անտարբեր չէ Տերյանի պոեզիայի նկատմամբ:

Տերյանի խոսքերով ժամանակակից երգերից մեկը ստեղծվել է Լևոն Արևշատյանի կողմից, որը անզուգական կատարում է հայտնի երգիչ-երաժիշտ Գոռ Սուջյանը՝ «Երկու ուրվական»[15]: Տերյանի բառերը հիմք են հանդիսացել նաև հետևյալ երաժիշտ-կատարողների համար, որոնցից շատերի անունը հայտնի է ժամանակակից ունկնդրին՝ Վահագ Ռաշ՝ «Հրաժեշտի խոսքերից», «Կարծես թե դարձել եմ ես տուն», Մարատ Նազարեթյան՝ «Տխուր երգ», Բեն Մխեյան՝ «Քաղցր պատրանք», Ռ. Մելիքյան՝ «Աշնան» և այլն:

Տերյանի խոսքերով գրված երգերը կատարել են Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստներ Հովհաննես Բաղալյանը, Ռուբեն Մաթևոսյանը, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Ա. Ավետյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Հ. Փամբուկչյանը, ժամանակակից հայտնի երգիչներ Գ. Սուջյանը, Վ. Ռաշը, Ս. Ամրոյանը և ուրիշներ: Քանի որ երգերը մեծ թիվ են կազմում, և բոլորին անդրադառնալ հնարավոր չէ, հղման տեսքով կներկայացվեն ամենահայտնիները:

Տերյանի պոեզիան ինքը երաժշտությունն է՝ նուրբ, քնքուշ, մեղեդային, այնպիսին, ինչպիսին բանաստեղծն էր: Վստահ եմ, որ դեռ շատերն են անդրադառնալու նրա բանաստեղծություններին, քանզի մեկ անգամ Տերյան կարդացողը չի կարող չգերվել ու մտքում չնոտագրել բանաստեղծությունները:

9.Իրատես 10.Հ. Բաղալյան, Էստոնական երգ,

11. Ա. Ավետյան, Կարուսել, 12. Ա. Բալջյան, Ես չգիտեմ՝ ուր են տանում…

13. Հ. Կարապետյան, Երգ(Կուրծքը հև առած), 16.Հ. Պապյան, Դու գալիս ես մութ իրիկնաժամին

14.Ա. Սիմոնյան, Ս. Ամրոյան, Իմ խաղաղ երեկոն է հիմա , 15. Սուջյան, Երկու ուրվական

Գլուխ 3 Պատկերավորման-արտահայտչական միջոցների կիրառությունը

Գաղտնիք չէ, որ հեղինակի հյութեղ ու անթերի լեզուն, նկարագրվող պատկերների հուզականությունը, պատկերավորման միջոցների ճիշտ և տեղին կիրառությունը իրենց ազդեցությունն են թողնում ընթերցողի վրա, տանում են նրան դեպի գրողի աշխարհը: Պատկերավորման-արտահայտչական միջոցները օգնում են հեղինակին ավելի պատկերավոր, տեսանելի, գունեղ ներկայացնել կյանքի երևույթներն ու առարկաները: Խոսքի այսպիսի մեծ վարպետների թվին է դասվում Վ. Տերյանը: Նրա բանաստեղծական լեզուն հարուստ է մակդիրներով, համեմատություններով, փոխաբերություններով, կիրառել է նաև անձնավորում, սիմվոլ(խորհրդանիշ), հրաշալիորեն օգտվել է բաղաձայնույթի ընձեռած հնարավորությունից: Նա հմտորեն կիրառել է նաև կրկնություն, հակադրություն, ճարտասանական հարցում, աստիճանավորում, շրջադասություն և այլն: Կներկայացնեմ դրանցից մի քանիսը միայն:

Տերյանի բանաստեղծական լեզվի հարստությունն են կազմում մակդիրները: Դրանք հատկանիշ ցույց տվող բառեր են, որոնց հիմքում ընկած է փոխաբերական իմաստ: «Գունեղ և ինքնատիպ մակդիրները ոչ միայն ընդգծում, առանձնացնում են առարկայի, երևույթի այս կամ այն հատկանիշը, այլև դառնում բանաստեղծի հուզական վերաբերմունքի, հոգեբանական արժևորման գեղեցիկ ու բազմերանգ արտացոլանք»8: «Հանդիպում» բանաստեղծությունը հարուստ է մակդիրներով՝ անտես թևեր, անուշ հրաշք, պայծառ վիշտ, հիվանդ կարոտ, տաք արցունք, տկար սիրտ…Ընդգծված մակդիրները հուզարտահայտչական երանգ են հաղորդում բանաստեղծությանը:

Հաճախ տրամադրությունները, զգացումները, գեղարվեստական պատկերները հնարավոր չի լինում արտահայտել բառերի ուղիղ իմաստներով, և հարկ է լինում գործածել դրանց փոխաբերական իմաստները՝ խոսքը ավելի պատկերավոր, արտահայտիչ դարձնելու համար: Դրանք երբեմն զուտ զգացմունքային ընկալման դաշտում են, ինչպես՝

Գարնան օրերի ժպիտով սիրուն
Ոսկի հայացքդ ժպտում է հոգուս,
Լուսավառված է իմ սև օրերում
Անուշ անունդդ, որպես արշալույս…

8. Մ. Հովհաննիսյան. «Վ. Տերյանի չափածոյի լեզուն և ոճը» , էջ 184

Մակդիրների կիրառության բազմաթիվ օրինակներ կարելի է բերել՝ անուշ աղմուկ, խելագար խնդություն, արևավառ սուր, պայծառ կարոտ, չար մրրիկներ և այլն: Պետք է նշել, որ Տերյանի մակդիրները ունեն ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս կիրառություն, ինչն ավելի է գեղեցկացնում խոսքը:

Վ. Տերյանի գործածած պատկերավորման միջոցների շարքում պատկառելի տեղ են գրավում համեմատությունները: Դրանք խոսքը հուզական են դարձնում, ավելի ներգործուն, հնարավորություն են տալիս ավելի խորությամբ, ավելի համապարփակ հասկանալու նկարագրվող պատկերը: Համեմատությունը պատկերավորման միջոց է, որի դեպքում որևէ առարկա, երևույթ համեմատվում է ուրիշ առարկաների կամ երևույթների հետ՝ ընդհանուր հատկանիշի հիման վրա՝ խոսքը առավել պատկերավոր դարձնելու համար: Համեմատության կիրառությունը ավելի շատ պայմանավորվում է հեղինակի գեղարվեստական մտածողության շրջանակներով: Հաճախ համեմատությունները այնքան անսպասելի են լինում, որ խոսքում ինքնատիպ են դառնում, յուրահատուկ: Բանաստեղծներից յուրաքանչյուրը ազատ է համեմատություններ ստեղծելու և կիրառելու հարցում: Համեմատությունները ձևավորվում են պես, նման, ասես, կարծես, որպես, իբրև, զերթ բառերով:

Որպես տերևն աշնամուտի՝ հողմի դեմ,
Դողում ես դու՝ որպես շյուղը եղեգնի:
(«Դարձյալ իջավ գիշեր»)

Աղբյուրն անուշ հեքիաթի պես
Իր լույս երգով ժպտում էր մեզ:
(«Անծանոթ աղջկան»)

Ես կանգնած եմ լուռ, անչար է հոգիս,
Թախիծս՝ խաղաղ անուրջի նման:
(«Էլեգիա»)

Մահի պես դաժան ձմեռն է իջել:
(«Աղբյուր»)

Ամպերի նման թող սահեն-գնան
Մտքերը մոլոր:
(«Էքսպրոմտ»)

Տերյանը համեմատությունների նուրբ վարպետ է: Նա կարողանում է յուրաքանչյուր համեմատությանը խոր իմաստ տալ: Այսպես՝ իր մենավոր սիրտը համեմատում է մոլորված թռչունի հետ, աղջկա մազերի ցնորական փայլը՝ ժայռից իջնող արագահոս ջրվեժի: Հեռավոր ու մաքուր սիրո պատկերն ստեղծելու համար սիրած հոգիների մասին նա ստեղծում է այսպիսի գողտրիկ համեմատություն.«Աստղերի պես և՛ հարազատ, և՛ օտար»:

Ինքնատիպ ու նուրբ են Տերյանի փոխաբերությունները: Դրանք կապված են բանաստեղծության ընդհանուր ոգու հետ, հարստացնում են տրամադրությունը, ավելի կատարյալ դարձնում մտահղացումը: Փոխաբերությունը խոսքի պատկերավորման միջոցներից ամենաներգործունն է: Նրա հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը, որի շնորհիվ էլ հեղինակը դրանցից մեկի անունը փոխարինում է մյուսի անվամբ:

Այսպես, օրինակ, Տերյանը գեղեցիկ փոխաբերական պատկերներով է նկարագրում մայրամուտը.

Մեռնում է օրը: Իջավ թափանցիկ
Մութի մանվածը դաշտերի վրա:

(«Էլեգիա»)

Ահա թե ինչպիսի փոխաբերական պատկերներով է նկարագրում արևածագը.

Արևելքը ալ քող նետեց ուսերին,
Լույսը վառեց կատարները լեռների:

(«Արևելքը ալ քող նետեց ուսերին»)

Վ. Տերյանը շարունակեց հայ պոեզիայի մեջ հազարամյա պատմություն ունեցող նմանաձայնության ավանդը: Հիշենք, որ դեռևս 10-րդ դարում խոշորագույն բանաստեղծ Նարեկացին իր տաղերում կիրառել է պատկերավորման այս ձևը: Դրա փայլուն օրինակներից է նրա «Տաղ Վարդավառի» -ն:

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից,
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:

Տերյանի բանաստեղծություններում ալիտերացիան(նույն կամ նման բաղաձայն հնչյունների կուտակումը՝ բաղաձայնույթը) երբեք ինքնանպատակ չէ: Այն լիովին համապատասխանում է նկարագրվող երևույթի բնույթին՝ ստեղծելով տեսողական

ու լսողական տպավորություն: Աշնան պատկերներ, տերևաթափ նկարագրելիս նա ստեղծում է ս, ջ, շ հնչյունների կուտակում, որոնց օգնությամբ ընթերցողը կարծես լսում է թափվող տերևների, աշնան սառը քամու ձայները:

Աշնան մշուշում շշուկ ու շրշյուն,
-Բարդիներն են բաց պատուհանիս տակ-
Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում,
Կանչում ես նորից կարոտով հստակ:
(«Շշուկ ու շրշյուն»)

Վերին աստիճանի ներդաշնակ, մարդկային հոգու խորքերը թափանցող երաժշտականության օրինակ է «Շշուկ ու շրշյուն» բանաստեղծությունը:

Տերյանը սիմվոլիզմի անգերազանցելի վարպետ է: Սիմվոլիզմը 19-20-րդ դարերի գրական ուղղություն է, որն ի սկզբանե արտացոլվել է ֆրանսիացի բանաստեղծների՝ Շ. Բոդլերի, Պ. Վեռլենի, Ա. Ռեմբոյի բանաստեղծություններում: Տերյանն իր սիմվոլիստական անզուգական պատկերներով ձգտում է բացահայտել մարդկանց հոգեական ապրումները, նրանց զգացմունքներն ու տրամադրությունը: Տերյանի սիմվոլները հիմնականում համընկնում են աշնան ու թախծի, տխուր ապրումների, խավար իրականության հետ: Տերյանի գեղագիտական մտածողության միանգամայն նոր համակարգը պայմանավորված էր նաև սիմվոլիզմի ազդեցությամբ, ինչի տված հնարավորություններն էլ լայնորեն կիրառեց բանաստեղծը:

Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ մութի թև,
Մի ըստվեր անցավ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով,
Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ՝ ճերմակ շորերով:
(«Տխրություն»)

Տխրությունը, որպես տրամադրություն, բանաստեղծը ներկայացնում է գունատ աղջկա տեսքով: Այդ սիմվոլիկ աղջիկը իր ներկայությամբ մթնոլորտը լցնում է ազնիվ ու գերող թախիծով: Ճիշտ է, մշուշոտ են մնում բանաստեղծի տխրության ակունքները, բայց ստեղծվում է նրբին հոգիների զգացողությունը, ցաված հոգու պատկերը:

Այսպիսով, Տերյանի սիմվոլները դառնում են պատկերների արտահայտման կարևոր բաղադրիչ և պատկերավորման գեղեցիկ միջոց:

Եզրակացություն

Վահան Տերյանի չափածոյում պատկերավորման միջոցների քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությանը:

Տերյանի չափածոն հարուստ է ոճաարտահայտչական լայն հնարավորություններով, պատկերավորման համակարգի ամենատարբեր միջոցների գործածությամբ: Պատկերավորությունը տերյանական խոսքի կարևորագույն արժանիքներից է, բանաստեղծի խոսքարվեստի ինքնատիպությունն ու ներգործությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը, որի ուսումնասիրությամբ էլ բացահայտվում է Տերյանի՝ խոսքի հարստացմանը նպաստելու մեծ կարողությունը, գեղարվեստական պատկեր կերտելու հմտությունն ու ինքնատիպ լեզվամտածողությունը:

Տերյանի չափածո խոսքում պատկերավորման միջոցները ծառայում են գեղարվեստական կոնկրետ խնդիրների և բանաստեղծի ոճը հատկանշող լեզվական միավորներ են: Տերյանը որպես մակդիր գործածել է բոլոր այն խոսքի մասերը, որոնք կարող են ունենալ մակդրային կիրառություններ: Բանաստեղծի չափածո խոսքին բնորոշ են մակդիրը գոյական որոշիչներով արտահայտելու հակումը, օքսիմորոնների գործածությունները: Ոճական ինքնատիպ արժեքով են հատկանշվում գունային մակդիրները: Տերյանի երկերում երբեմն որոշակի նշանակություն է ձեռք բերում բանաստեղծական հնչյունաբանությունը: Գեղարվեստական զգացողությունը նրան թելադրում է այնպիսի բառերի ընտրություն, որոնց հնչյունային կազմը ևս ներդաշնակի բովանդակությանը և ոճին: Գեղարվեստական խոսքի մեջ նա գործածել է բաղաձայնույթ և առձայնույթը, որոնք ծառայել են գեղարվեստական խոսքի պատկերմանը:

Տերյանի մեծությունը չափվում է նրա թողած գրական ազդեցության շառավիղներով ու շրջանակներով: Դժվար է ցույց տալ մի ուրիշ բանաստեղծի, որն այնքան ներգործած լինի 20-րդ դարի մեր պոեզիայի զարգացման վրա:

Օգտագործված գրականության ցանակ

1. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն. ուսում. ձեռնարկ, Երևան 2003:
2. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, 1989:
3. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն /17-րդ դարից մինչև 1920 թ./, Երևան, 1978:
4. Մարության Ա., Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն ոճը, Երևան, 1979:
5. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000:
6. Պապոյան Արտ., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Երևան, 1970
7. Պարտիզունի, Վ., Վահան Տերյան, Երևան, 1968:
8. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ (Խոսքի տեսություն), գ. 2, Երևան, 1991:
9. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:
10. Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Երևան, 1976:
11. Տերյան Վ., Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 1, Երևան, 1960:
12. Розенталь Д., Практическая стилистика русского языка, М., 1968.
13. Տերյան Վ., Լիակատար ժողովածու, Երևան, 1985թ.